ՀՈՒՆՎԱՐ - ՀՈՒՆԻՍ 2022
JANUARY - JUNE



# NEWSLETTER
# ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հայաստան, Երևան, 0015, Yerevan, Armenia
Պարոնյան 21/1 Paronyan
Armenian Red Cross Society
Հայկական Կարմիր խաչի ընկերություն

redcross@redcross.am
www.redcross.am

## ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելեց Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոն

## RA Prime Minister Nikol Pashinyan visited Gyumri 24-hour care center



Ապրիլի 16-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել էր Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոն՝ ծանոթանալու հիմնանորոգումից հետո խնամառուների զգալիորեն բարելավված պայմաններին:

ՀՀ վարչապետին դիմավորեցին և իրականացված աշխատանքներին ծանոթացրեցին ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը և գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանը:

Կենտրոնի հիմնանորոգման և խնամքի որակի բարձրացման նպատակով 2020 թվականից մինչ օրս ներդրվել է մոտ 287 միլիոն ՀՀ դրամ:

Հիմնանորոգումն իրականացվել է Ավստրիական զարգացման գործակալության, Ավստրիական, Իտալական և Շվեյցարական Կարմիր խաչերի ֆինանսական աջակցությամբ:

On April 16 RA Prime Minister Nikol Pashinyan visited Gyumri 24-hour care center to see the significantly improved conditions of beneficiaries after the renovation.

The RA Prime Minister was welcomed by ARCS President Mkhitar Mnatsakanyan and Secretary General Anna Yeghiazaryan, and was introduced into the implemented works.

About 287 million AMD has been invested since 2020 for renovation and improvement of the care quality.

The renovation was carried out with the financial support of the Austrian Development Agency, the Austrian, Italian and Swiss Red Crosses.

## Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Պատվոգիր ստացավ ՀՀ Առողջապահության նախարարության կողմից

## Armenian Red Cross Society received a certificate of honor from the Ministry of Health

Հունվարի 21-ին ՀՀ Առողջապահության առաջին տեղակալ Լենա Նանուշյանը Հայկական Կարմիր խաչի ընկերության գրասենյակում Պատվոգիր հանձնեց ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանին՝ Հայաստանի Հանրապե-տության մարզերում և Երևանում COVID - 19 վարակի դեմ

On January 21, Lena Nanushyan, First Deputy Minister of Health of the Republic of Armenia, presented a Certificate of Honor to ARCS Secretary General Anna Yeghiazaryan for supporting the Ministry in the





պատվաստումների իրականացմանն աջակցություն ցուցաբերելու, կամավորների կողմից հանրության իրազեկման աշխատանքների համար:

*- Շատ կարևոր էր Հայկական Կարմիր խաչի ընկերության աջակցությունը՝ պատվաստումների գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման գործում: Մենք զգացինք, որ մենակ չենք, և ՀԿԽԸ-ն կանգնած է պետության կողքին: Պետք է նշեմ հատկապես կամավորների նվիրվածությունը: Տպավորված ենք, թե ինչ մեծ արագութ-յամբ նրանք կազմակերպված ձևով Օպերայի հրապարակը վերածեցին պատվաստման կետի և, թե որքան սրտացավ էին վերաբերվում պատվաստվողներին: Շատ շնորհակալ ենք համագործակցության համար, քանի որ, եթե մենք այսօր ասում ենք, որ բնակչության մեծամասնությունը ստացել է պատվաստման առաջին դեղաչափը, այստեղ դուք ունեցել եք ձեր ներդրումը, -* հանձնելով պատվոգիրը նշեց ԱՆ առաջին տեղակալը:

ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանն ԱՆ առաջին տեղակալին ներկայացրեց ՀԿԽԸ գործունեության ռազմավարական ուղղությունները և դրանց փոխկապակցվածությունը՝ աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման տեսանկյունից, մասնավորապես՝ սոցիալ-առողջապահական ուղղությամբ իրականացվող ծրագրերը, ՀԿԽԸ արձագանքը COVID-19 համավարակի և Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքներին:

*- Շնորհակալ եմ արդյունավետ համագործակցության համար: ՀԿԽԸ-ն՝ որպես աջակցող կառույց կառավարությանը մարդասիրական ոլորտում՝ մշտապես կանգնած է ձեր կողքին՝ մոբիլիզացնելով մարդկային և ֆինանսական ռեսուրսներ և աջակցելով այն ուղղություններում, որտեղ մեր կարիքը կա, -* *ասաց ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանը: - Այս Պատվոգիրը շատ պարտավորեցնող է և ոգևորող՝ հատկապես մեր կամավորների համար:*

Քննարկվեցին նաև հետագա համագործակցության հարցեր՝ պատվաստումների վերաբերյալ առավել թիրախային իրազեկման, Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնում պալիատիվ խնամքի կազմակերպման, հոգեբանական ծառայության կարևորության և այլ թեմաներով: ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանը ԱՆ առաջին տեղակալ տիկին Նանուշյանին նվիրեց «Հարյուր տարվա մարդասիրություն» գիրքը՝ նվիրված ՀԿԽԸ գործունեության 100-ամյակին:

COVID-19 vaccination in Yerevan and regions of Armenia, and public awareness activities of volunteers.

"*The support of the Armenian Red Cross Society in increasing the efficiency of the vaccination process was crucial. We felt that we were not alone and the ARCS stands by the state. I should emphasize the dedication of the volunteers. We are impressed by the speed with which they organized the the square of the Opera House into a vaccination center, and how compassionate they were for the vaccinated. We are grateful for the cooperation, because if we say today that the majority of the population received the first dose of the vaccine, you have made your contribution there,*" the First Deputy Minister of Health said.

ARCS Secretary General Anna Yeghiazaryan presented to the First Deputy Minister the strategic directions of ARCS activities, their interconnectedness in terms of more effective organization of work, in particular, the programs of Social support and health care direction, ARCS response to COVID-19 epidemic and the escalation of the Nagorno-Karabakh conflict.

“*Thank you for the effective cooperation. The ARCS, as an auxiliary organization to the government, has always stood by you in the humanitarian sphere, mobilizing human and financial resources, supporting in areas where we are needed,*" Anna Yeghiazaryan, ARCS Secretary General said. "*This Certificate is both bounding and inspiring, especially for our volunteers.*”

Issues of further cooperation on more targeted vaccination awareness, organization of palliative care in Gyumri day care center, the importance of psychological services and other topics were also discussed. ARCS Secretary General Anna Yeghiazaryan presented the deputy minister with the book "One Hundred Years of Humanity" dedicated to the 100th anniversary of ARCS.

## ՀԿԽԸ պատվիրակությունը մասնակցեց 23-րդ Գլխավոր համագումարին



Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) պատվիրակությունը՝ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանի գլխավորությամբ հունիսի 19-ից 23-ը գտնվում էր Ժնևում, որտեղ մասնակցում էր Կարմիր խաչի և Կարմիր մահիկի 23-րդ Գլխավոր համագումարին:

Հունիսի 20-ին Համագործակցության հուշագիր ստորագրվեց Իրանի Կարմիր մահիկի հետ, որը ստորագրեց ԻԿՄ նախագահ պարոն Փիր Հուսեյն Քորիվանդը:

Ըստ հուշագրի՝ Ազգային ընկերությունները կհամագործակցեն աղետների կառավարման և արագ արձագանքի, առողջապահության, կազմակերպության զարգացման և կամավորության խթանման ոլորտներում:

## ARCS delegation participated in 23nd General Assembly




ARCS delegation led by Dr. Anna Yeghiazaryan, Secretary General, participates in RCRC 23 General Assembly.

On 20 June, MOU was signed with Iranian Red Crescent. IRC President, Pir-Hossein Kolivand signed the MOU.

According to the memorandum, the National Societies will cooperate in the fields of disaster management, rapid response, healthcare, organizational development and volunteering promotion.

The ARCS delegation had a number of meetings with the leaderhsips of partner National Societies, to discuss the scope of current cooperation and future partnership.

## Ականների ռիսկերի իրազեկման արշավներ սահմանամերձ համայնքների դպրոցներում



Հայկական Կարմիր խաչի ընկերության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համատեղ իրականացվող «Ռիսկերի իրազեկում և անվտանգ վարքագիծ (ՌԻԱՎ) 2022»

## Mine risk awareness campaigns in border schools



Within the framework of "Risk Awareness - Safe Conduct 2022" program implemented jointly with the Armenian Red Cross Society, and the International Committee of the

ծրագրի շրջանակներում ապրիլ-մայիս ամիսների ընթացքում Տավուշի մարզի Բաղանիս, Ոսկեպար, Բերդավան սահմանամերձ համայնքների դպրոցներում տիկնիկային թատրոնների և դերային վարժությունների միջոցով իրականացվել է ռիսկերի իրազեկում և անվտանգ վարքագծի ուսուցում՝ նախատեսված աշակերտների, ուսուցիչների և ծնողների համար: Նպատակն էր անհրաժեշտ գիտելիքներ տրամադրել ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների տեսակների և դրանց ազդեցության, գնդակոծության և հրետակոծության ընթացքում անվտանգ վարքագծի ընդհանուր կանոնների վերաբերյալ՝ նպաստելու պայթուցիկ զինամթերքի վտանգով պայմանավորված դժբախտ պատահարների նվազեցմանը:

Red Cross, risk awareness was carried out during the months of April-May, in the schools of border communities Baghanis, Voskepar, Berdavan of Tavush region, through puppet theater, role-play exercises, for school children, teachers, parents. The aim of the campaign was to provide knowledge about land mines, explosive remnants of war, their impact, shelling, in order to help reduce the risk of explosive hazards.

## Խաղարկային վարժանք կամավոր հրշեջ-փրկարարների համար



Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ ապրիլի 4-ին և 6-ին Կոտայքի մարզի Գառնի և Լոռու մարզի Շիրակամուտ համայնքներում կազմակերպել էր «Կամավոր հրշեջ-փրկարարների ներգրավումը հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքներին» թեմայով սիմուլյացիոն վարժանք, որի նպատակն էր կատարելագործել այդ երկու համայնքներում ստեղծված կամավոր հրշեջ-փրկարարների թիմերի գործնական հմտությունները՝ հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների իրականացման ժամանակ:

Ըստ սցենարի՝ Փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի 911 ծառայություն ահազանգ էր ստացվել, որ ուժեղ երկրաշարժից հետո դպրոցում հրդեհ է բռնկվել: Դպրոցն իրականացրել է տարհանում, բայց կան տուժածներ:

Վարժանքին ներգրավվել են Կոտայքի ՄՓՎ Աբովյանի ՀՓՋ մեկ մարտական հաշվարկ, Երևան քաղաքի ՓՎ թիվ 9 ՀՓՋ մեկ մարտական հաշվարկ, Գառնի համայնքի կամավոր հրշեջ-փրկարարներ, Շտապօգնության 1 բրիգադ:

Կամավոր հրշեջ-փրկարարների թիմերը ստեղծվել, ուսուցանվել և տեխնիկապես հագեցվել են ԵՄ մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության վարչության, Ավստրիական զարգացման համագործակցության և Ավստրիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ իրականացվող «Կամավոր կարողությունների միջոցով բնակչության պաշտպանության համակարգերի ամրապնդում» ծրագրի շրջանակներում:

## Simulation exercise for volunteer fire-rescuers



The Armenian Red Cross Society organized a simulation exercise on "Involvement of volunteer fire-rescuers in firefighting and rescue operations" on April 4 and 6 in Garni, Shirakamut communities of Kotayk and Lori regions. The goal of the exercise was to develop practical skills of teams in firefighting and rescue operations.

According to the script, the 911 service of the Crisis Management Center of the Regional Rescue Department received a call that a fire had broken out in the school after a strong earthquake. The school performed evacuation, but there are casualties.

The training involved one fire brigade of Kotayk Rescue Department of Abovyan city, one fire brigade of Yerevan city, volunteer fire-rescuers of Garni community, 1 ambulance brigade.

Volunteer fire-rescue teams were set up and trained within the framework of the EU Humanitarian Aid and Civil Defense administration, the Austrian Development Cooperation and the Austrian Red Cross within "Strengthening Civil Protection Sy stems through Voluntary Capacity" program.

## Պատվաստումը հոգատարություն է




Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ապրիլին միացել էր Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից՝ ՀՀ Առողջապահության նախարարության, ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի հետ համատեղ իրականացվող «Պատվաստումը հոգատարություն է» արշավին, որն ուղղված է COVID-19-ի դեմ պատվաստումները մարզերում առավել հասանելի դարձնելուն և համավարակի մասին իրազեկվածության բարձրացմանը:

Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորներն աջակցում էին արշավին՝ իրականացնելով հանրային իրազեկում և օգնելով գործընթացի կազմակերպչական աշխատանքներում:

ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Հանս Կլյուգեի «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն կատարած այցի ընթացքում, ՀՀ Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ Հայաստանում պատվաստումային գործընթացին ցուցաբերած աջակցության համար:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության ֆինանսավորմամբ:

## Խնամքի ծառայություն Արթիկի, Ալավերդու և Եղեգնաձորի 134 տարեցների համար

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը 2022 թվականի հունվարից Արթիկ՝ Շիրակ (45), Ալավերդի՝ Լոռի (43) և Եղեգնաձոր՝ Վայոց ձոր (46) համայնքներում «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայման-ներում խնամքի ծառայություններ» պետական դրամա-շնորհային ծրագրի շրջանակներում խնամքի ծառայություն է տրամադրում միայնակ տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց: Խնամքն իրականացվում է վերջիններիս տներում, հատուկ պատրաստված անձնակազմի կողմից՝ անհատական կարիքների հիման վրա մշակված ծրագրերի համաձայն:
Արդյունքում խնամվողներին տրամադրվում են հետևյալ ծառայությունները՝

• Սոցիալ-առողջապահական խնամք. ներառում է բժշկի նշանակմամբ դեղերի և բժշկական նշանակության նյութերի ստացման գործում աջակցություն, վերքերի մշակում, զարկերակային ճնշման որոշում, արյան մեջ գլյուկոզայի

## Vaccination is Care



In April, the Armenian Red Cross Society joined the "Vaccination is Care" campaign implemented by the World Health Organization, the Ministry of Health of the Republic of Armenia, the National Center for Disease Control and Prevention of the RA Ministry of Health.

Volunteers of the Armenian Red Cross Society supported the campaign by carrying out public awareness and helping with the organization of the process.

During the visit of Hans Kluge, Director of the WHO European Regional Office to Grigor Lusavorich medical centeh, RA Minister of Health Anahit Avanesyan expressed special thanks to the Armenian Red Cross Society for its support to the vaccination process in Armenia.

The project is implemented with the financing of the European Union.

## Care service for 134 elderly people in Artik, Alaverdi and Yeghegnadzor

Since January 2022, the Armenian Red Cross Society has been providing care services to lonely elderly people and people with disabilities in the communities of Artik of Shirak region (45), Alaverdi of Lori (43) and Yeghegnadzor of Vayots dzor (46) within the framework of the state grant program "Home Care Services for the Elderly and People with Disabilities". Care is provided in their homes by trained staff, according to programs developed on the basis of individual needs.

The following services are provided to the beneficiaries:

• Social and health care: includes assistance in taking medicine and medical substances prescribed by doctor, treating wounds, taking blood pressure, monitoring blood glucose levels, referral to a medical facility for



քանակի վերահսկում, ուղղորդում բժշկական հաստատություն՝ հետազոտման և այլն: Կարիքի դեպքում խնամառուները ապահովվում են նաև խնամքի միջոցներով:

- Կենցաղային օգնություն և սպասարկում. ներառում է անձնական հիգիենայի պահպանում, տան մաքրում, սննդի պատրաստում, կերակրում, լվացք և կենցաղային մի շարք այլ գործառույթներ: Ծառայությունը տրամադրվում է տնային խնամողների կողմից:
- Կամավորների այցելություններ. ընկերակցում, զրույց, ընթերցանություն, գնումների իրականացում, աջակցություն մանր կենցաղային հարցերում և այլն: Կամավորների գործունեությունը նպաստում է նաև շահառուների սոցիալիզացիային:
- Սոցիալական աշխատողի այցելություն՝ խորհրդատվություն, գնահատում, ուղղորդում:
- Հոգեբանի խորհրդատվություն:
- Մշակութային միջոցառումների կազմակերպում:

Խնամքը տրամադրվում է ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններ ապահովելու և տարեց և հաշմանդամություն ունեցող շահառուներին իրենց հարազատ սոցիալական միջավայրում հնարավորինս երկար պահելու նպատակով: ՀԿԽԸ կողմից կիրառվող մոդելի շրջանակներում խնամքը տրամադրվում է որպես համալիր սոցիալ-առողջապահական ծառայությունների համախումբ՝ նպատակ ունենալով ապահովել որակյալ, անհատական կարիքներին համապատասխան, արժանապատիվ աջակցություն, որը նպաստում է խնամվողի սոցիալ-առողջական վիճակի բարելավմանը:
Լուսանկարում՝ խնամառուները Ալավերդու պատկերասրահ այցի ժամանակ:

## Կանխիկ աջակցություն Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով տեղահանվածներին

Միանալով ՀՀ Կառավարության կանխիկ աջակցության ծրագրերին՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով տեղահանված անձանց և հյուրընկալող ընտանիքներին 2020-2022թթ. ընդհանուր առմամբ տրամադրել է 2 միլիարդ 828 միլիոն 880 հազար 696 ՀՀ դրամ, այդ թվում.

examination, etc. Caregivers are also to the provided with care items, if needed.

- Household help and maintenance: includes keeping personal hygiene, cleaning the house, preparing food, feeding, laundry and a number of other household functions. The service is provided by home caregivers.
- Visits of volunteers: companionship, conversation, reading, shopping, assistance in small household matters, etc. The activities of volunteers also contribute to the socialization of the beneficiaries.
- Visit of social workers – consultation, assessment and guidance.
- Psychologist's consultation.
- Organizing cultural events.

Care is provided in order to provide social and living conditions closer to family and to keep elderly and disabled beneficiaries in their own social environment as long as possible. Care is provided within the framework of the model used by the ARCS as a set of complex social and health care services, with the aim to provide quality, dignified support in accordance with individual needs, which contributes to the improvement of the social and health condition of the person being cared for. In the photo: the beneficiaries during a visit to the Alaverdi Gallery.

## Cash support to people displaced as displaced following the NK conflict escalation

Joining the Government of the Republic of Armenia Cash Assistance Programs, the Armenian Red Cross Society, following the escalation of the Karabakh conflict, has provided a total of 2,828,880,696 AMD to host and displaced families between 2020-2022, including:



- Հիմնական կարիքների մատչելիության ապահովում. կոմունալ վճարներ ապաստանների համար, որտեղ տեղավորվել են Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով տեղահանված մարդիկ (545 ապաստան, ավելի քան 16,000 մարդ, ընդհանուր՝ 174 միլիոն 490 հազար 108 դրամ)

- Աջակցություն հյուրընկալող ընտանիքներին ( 6184 ընտանիք, 17 538 մարդ, յուրաքանչյուր չափահասի համար՝ 30 000 ՀՀ դրամ, 17 538 մարդու համար, ընդհանուր՝ 538 միլիոն 990 հազար 588 ՀՀ դրամ)

- Աջակցություն տեղահանված անձանց (14 000 մարդ, յուրաքանչյուր անձին 68 000 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 952 միլիոն ՀՀ դրամ)։

- Աջակցություն Սյունիքի և Գեղարքունիքի սահմանամերձ համայնքներին (29 համայնքների 1685 ընտանիքի միանվագ կանխիկ աջակցություն՝ մինչև ձմեռնամուտ անասնակեր և վառելափայտ ձեռքբերելու համար, ընդհանուր՝ 471 միլիոն 800 հազար ՀՀ դրամ)։

- Աջակցություն տեղահանվածներին՝ կոմունալ վարձավճարների փոխհատուցման համար (15 000 դրամ միանվագ աջակցություն 15 000 մարդու, այդ թվում նաև 1500 տեղաբնակ խոցելի անձի, ընդհանուր՝ 225 մլն ՀՀ դրամ).

- Աջակցություն տեղահանված 0 -18 տ., 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և անշարժ գույք կորցրած անձանց հունվար – փետրվար ամիսների համար (6129 մարդ, 20 և 40 հազարական դրամ, ընդհանուր 466 միլիոն 600 հազար ՀՀ դրամ)։

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կանխիկ աջակցության ծրագրերն իրականացրել է

- Կարմիր խաչի միջազգային կոմիտեի՝ 1 միլիարդ 204 միլիոն 810 հազար 588 ՀՀ դրամ,
- Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի՝ 272 միլիոն 580 հազար,
- Շվեյցարական Կարմիր խաչի՝ 399 միլիոն 490 հազար 108 ՀՀ դրամ,
- ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի՝ 952 միլիոն ՀՀ դրամ, աջակցությամբ։

- Support to the access of basic needs: utility fees for the shelters where the displaced people fleeing the NK conflict escalation were accommodated545 shelters, over 16,000 ppl, AMD 174,490,108 )

- Support to host families (about 17 538 ppl covered, AMD 538,990,588 AMD 30 000 to each adult person)

- Support to displaced people (14000 persons, 952 mln AMD, AMD 68 000 for each person)

One-time cash assistance to 1685 families of Syunik and Gegharkunik border communities to cover heating and cattle fodder expenses for winter (471'800'000 AMD in total).

One-time cash assistance to 15'019 displaced persons (including 1500 vulnerable residents) to reimburse utility bills (225 mln AMD in total)

Assistance to 6129 displaced persons aged 0-18 years, 1st and 2nd group disabled and those lost their property, covering January and February (20'000 and 40'000 AMD each, 466'600'000 AMD in total).

The Armenian Red Cross distributed cash assistance with support and funding provided by:

- International Committee of the Red Cross - 1,204,810,588 AMD
- International Federation of Red Cross and Red Crescent Societies - 272,580,000 AMD
- Swiss Red Cross - 399,490,108 AMD
- Office of the United Nations High Commissioner for Refugees - 952 million AMD.